Աշխատանքի ծածկագիր 3845

ՈՐՈՇՈՒՄ

ք. Երևան 20.10.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
Նախագահությամբ՝ Ռ. Մխիթարյանի
Մասնակցությամբ անդամներ՝
Ա.Մելիքսեթյանի
Հ.Խաչատրյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) քննության առնելով դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակի հակակոռուպցիոն մասնագիտացման բաժնի կոռուպցիոն հանցագործությունների քննության ենթաբաժնի համալրման նպատակով անցկացված որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը

ՊԱՐԶԵՑ

Բողոքարկվել է տարբերակ 5-ի քրեական դատավարության բաժնի թեստի 11, 12, 20, 21, 24, 25, 29, 34 և 37-րդ հարցերը:

11-րդ հարցի վերաբերյալ հավակնորդի հիմնավորումն ընդունելի չէ, քանի որ այն չի բխում ՀՀ քրեական դատավարության 154-րդ հոդվածից, իսկ ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 299-րդ հոդվածին, ապա այն սույն դեպքում վերաբերելի չէ, հետևաբար գնահատականը բարձրացման ենթակա չէ:

12-րդ հարցի վերաբերյալ հավակնորդի հիմնավորումներն ընդունելի չեն, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի համաձայն՝ եթե վերադաս դատարանի փոխանցած վարույթով չեն կատարվել այդ դատարանի սահմանած ծավալի շրջանակներում անհրաժեշտ վարութային գործողությունները, ապա դատական ակտը ենթակա է անվերապահ բեկանման, հետևաբար խնդրում առկա չէ 2 ճիշտ պատասխան, ուստի գնահատականը բարձրացման ենթակա չէ:

20-րդ հարցի վերաբերյալ հավակնորդի հիմնավորումներն ընդունելի են, քանզի թեստի ա) պատասխանում <<հիմնավոր>> բառի բացակայության պայմաններում

Created With Tiny Scanner

հանձնաժողովի համար ընդունելի է փաստարկը, հավակնորդի կողմից ընտրված պատասխանը համարվում է ճիշտ և տրվում է 1 միավոր:

21-րդ հարցի վերաբերյալ հավակնորդի հիմնավորումն ընդունելի չէ, քանզի նախ այն չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 167-րդ հոդվածի 6-րդ մասի վերլուծությունից, բացի այդ, հավակնորդի կողմից պաշտպանի պարտադիր մասնակցության դեպքերը նույնացվել են իրավաբանական օգնության վճարման համար պետության կատարած ծախսերը բռնագանձելու դեպքերի հետ: Ուստի գնահատականը բարձրացման ենթակա չէ:

24-րդ հարցի վերաբերյալ հավակնորդի հիմնավորումներն ընդունելի չեն, քանի որ չեն բխում վկայակոչած նորմի՝ ՀՀ քրեական դատավարության 243-րդ հոդվածից, քանի որ այդ հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ թեստի պատասխանները կառուցված է այն **տրամաբանությամբ,** որ խոսքը վերաբերվում է միևնույն անձին: Ինչ վերաբերում է հավակնորդի այն պնդմանը, որ թեստի պատասխաններում առկա է ևս մեկ ճիշտ պատասխան, ապա այդ պնդումը հիմնազուրկ է, հետևաբար գնահատականը բարձրացման ենթակա չէ:

25-րդ հարցի վերաբերյալ հավակնորդի հիմնավորումներն ընդունելի են, քանզի թեստի ա) պատասխանում նոր քրեական վարույթ նախաձեռնված լինելու կամ չլինելու հանգամանքի բացակայության պայմաններում միանշանակ հնարավոր չէ գալ այն եզրահանգման, որ այդ կետում նշված դատողությունը ճիշտ է, որպեսզի պայմաններում հանձնաժողովի համար ընդունելի է հավակնորդի կողմից ընտրված պատասխանը: Ուստի տրվում է 1 միավոր:

29-րդ հարցի վերաբերյալ հավակնորդի հիմնավորումներն ընդունելի չեն, քանի որ ընտրված պատասխանը չի բխում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 428 և 420 հոդվածների համակցված վերլուծությունից, քանզի բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելիս հնարավոր է իրավիճակ, երբ վերդիկտ կայացնելիս պարզման ենթակա հանգամանք լինի նաև անձի մեղքի ապացուցումը, մինչդեռ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու որևէ վարույթով վերդիկտ կայացնելիս պարզման ենթակա չէ անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի նշանակման անհրաժեշտության հիմնավորվածությունը, հետևաբար գնահատականը բարձրացման ենթակա չէ:

34-րդ հարցի վերաբերյալ հավակնորդի հիմնավորումն ընդունելի չեն, քանի որ թեստում առկա է որոշակիության պայմաններին բավարարող միայն մեկ ճիշտ պատասխան, մինչդեռ հավակնորդի կողմից ընտրվել է ակնհայտ սխալ տարբերակ, հետևաբար գնահատականը բարձրացման ենթակա չէ:

Created With Tiny Scanner

37-րդ հարցի վերաբերյալ հավակնորդի հիմնավորումներն ընդունելի չեն, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 329-րդ հոդվածի 2-րդ մասն իմպերատիվ սահմանում է, որ անչափահաս տուժողի կամ վկայի հարցաքննությունը կատարվում է հոգեբանի մասնակցությամբ, այլ խնդիր է, որ հոգեբանը կարող է հրավիրվել կամ կողմի միջնորդությամբ, կամ դատարանի նախաձեռնությամբ: Ինչ վերաբերում է հավակնորդի այն փաստարկին, որ խնդրում առկա է 2 ճիշտ պատասխան, ապա հանձնաժողովի համար նման պնդումն ընդունելի է, սակայն հաշվի առնելով այն փաստը, որ հավակնորդի կողմից չի ընտրվել այդ 2 ճիշտ պատասխաններից որևէ մեկը, հետևաբար գնահատականը չի բարձրացվում:

Ելնելով վերոգրյալից՝ հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

Թիվ **3845** ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակիորեն՝ քրեական դատավարությունից ստացված 20 միավորը բարձրացնել 2 միավորով, արդյունքում արձանագրել 22 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ _____ Ռ.ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ _____ Ա.ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

_____ Հ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Created With Tiny Scanner